| | Ռուսիոյ ։ Ր. | Կ. | Կ. Պոլիս ։ Ֆր. | Ս. |
|---|---|---|---|---|
| Վարժութիւն (exercice) № 3, գլխագրերը մեծ և միջին ձեւ, կէս 4-ծալ թերթ, չորս երես. | | | | |
| հարիւր (100) օրինակը . . . | 2 | — | 8 | — |
| հինգ հարիւր (500) օրինակը . . | 10 | — | 40 | — |
| Վարժութիւն (exercice) № 4, այբբենը և բառեր միջին ձեւի մեծութեան տառերով. մի տետր կամ 8 էջեր. | | | | |
| հարիւրը (100) . . . . . . . | 4 | — | 16 | — |
| հինգ հարիւրը (500) . . . . | 20 | — | 80 | — |
| Վարժութիւն (exercice) № 5, առանձին պարբերութիւններ և փոքրիկ հատուածներ մանր տառերով տպած և թուանշաններ, կէս տետր կամ 4 էջեր. | | | | |
| հարիւրը (100) . . . . . . . | 2 | — | 8 | — |
| հինգ հարիւրը (500) . . . . | 10 | — | 40 | — |
| Հայերէն կանոնաւոր և վայելուչ գրութեան առաջացանկեր (transparent) № № 1, 2, 3, և 4, գունաւոր կարմրագոյն հաստ մեծ թերթի վերայ, սեւ թանաքով տպած, չորս երես. | | | | |
| 25 օրինակը . . . . . . . . | 2 | 50 | 10 | — |
| 50 օրինակը . . . . . . . . | 4 | 50 | 18 | — |

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Պատուեա՛ զՏէր ՚ի քոյոց արդար վաստակոց ։ Առակ. Գ. 9.*

Հազարաւոր միջոցներ կան, որք առիթ կուտան բարեպաշտ հոգւոյն առ Աստուած ունեցած սիրոյն նշանը արտայայտելու։ Աստուածպաշտութիւնը կը թելադրէ զմարդ, որ Աստուծմէ ընդունած պարգեւներուն զԱստուած փառաւորէ։ Այսու զգացմամբ իւրաքանչիւր անձն կարող է յանուն Աստուծոյ շատ տեսակ առաքինական գործքեր ընել. ինչպէս՝ աղքատները կերակրել, անկելոց օգնել, հասարակաց օգտակար ծառայութիւններ ընել, և այլն։ Այս ամէնը կ՚ընէ մարդ չը խնայելով իւր հանճարը, իւր զօրութիւնը, իւր աշխատութիւնը, և իւր ստացուածքը, զորս ընդունած է Աստուծմէ և կը պարտի Աստուծոյ։ Երբ՝ եթէ մէկը այսպիսի զոհողութիւններ կ՚ընէ Աստուծոյ համար, կը պատուէ նա զԱստուած իւր արդար վաստակներով։ Այս կարգէն է զանազան նուիրատուութիւնք եւ յիշատակք զորս Աստուծոյ կը նուիրէ բարեպաշտ հոգին իւր կայքէ կամ բաժնէն իւր ստացուածքներէն։

Այս օրերս մեր Եգիպտաբնակ ազգայիններէն վսեմաշուք Գէորգ պէյ Սափայելեան Աստուածսիրութենէ շարժեալ՝ կամելով իւր արուեստին, աշխատութեան եւ բա-

digitised by A.R.A.R.@

տացուածոյ պտուղէն մաս մը Աստուծոյ ընծայել, և միանգամայն« յիշատակ ունենալ 'ի Սիօն», իւր աշխատութեամբ և ծախիւք մէկ զոյգ՝ երկուքուկէս մեթր բարձրութեամբ ոսկեզօծ մեծ ու փառաւոր աշտանակներ նուիրեց Փրկատուի Տեառն մերոյ կենատու սուրբ Գերեզմանի դրան առջեւ դրուելու համար։ Այն աշտանակներուն ձեւոյն և վայելչութեան վերայ արժանաւոր գովեստ տալ չեմք համարձակիր, միայն այս չափ կ՚ըսեմք որ չափուց համեմատութիւնը, դրուագաց պարզութիւնը և կանոնաւոր արուեստի ծնունդ ըլլալը նոցա գեղեցկութե եւ շքեղութեան նկարագիրն ու գովեստն է, որ սուրբ տեղեաց մէջ եզակի և մանաւանդ խիստ կարեւոր լինելուն համար մեծ պատիւ կը բերէ Վսեմաշուք Նուիրատուին և պարծանք Ազգիս։

Քանզի սուրբ Տեղիքը քրիստոնեայ ազգաց հետ ընկերակցութեամբ բաժնուած ըլլալուն՝ սուրբ Գերեզմանի դրան առջեւ երեք քրիստոնեայ ազգերը իրաւունք ունին երկ երկու զոյգ մեծ և փոքր աշտանակներ ունենալ. մեր ունեցած առաջին աշտանակները թէ իրենց անձեւութեամբ և թէ հինցած ու խորտակուած ըլլալուն անպիտանացած էին, և շատոնց նորոգութեան կարեւորութիւնը զգալի եղած էր։ Բարեսէր անձինք ոմանք խօսացան և ձեռնարկեցին անգամ, բայց կամ անյաջող դիպուածներու և կամ ծախուց մեծութեան առջև կասեցան. որոց յաղթելով Վ. Գէորգ պէյ՝ յաջողեցաւ առատաձեռնութեամբ եւ քրտամբ ազգայնութեան պատիւը նորոգել և բարձրացնել օտար ազգաց մէջ։ Ահա սոյն հանգամանքներն եւս կը վսեմացնեն Նուիրատուին և Նուէրին արժանիքը։

Այն աշտանակներուն պատուանդանին ճակատը Գողգոթի վայելուչ տառերով հետեւեալ արձանագրութիւնը կը կարդացուի.

'Նուիրեալ 'ի Գէորգ պէյ Սաֆայեանէ 'ի յիշատակ հանգուցեալ կողակցոյն իւրոյ Եֆթիկ Տիկնոջ։

յԵգիպտոս 1872։

Միաբանութիւնս երախտապարտ շնորհակալութեամբ ընդունելով սոյն յիշատակաց արժանի մեծ նուէրները, իրենց տեղը զետեղեց և հանգուցեալ Եֆթիկ հանըմ տիկնոջ՝ անմահ հոգւոյն համար հանգստեան պաշտօն կատարեց, և ջերմ բարեմաղթութիւններ ըրաւ Վ. Գէորգ պէյի Թանկագին կենաց երկարութեան և յաջողութեան համար։

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ամսոյս 4ին Սաքսոնիոյ գահաժառանգ իշխանը ընկերակցութեամբ տեղւոյս Վսեմ. Կառավարչին, Գերմանիոյ հիւպատոսին, և զօրաց մեծ բազմութեամբ քաղաքս մտաւ։ Յատկապէս մեր վանքը այցելութիւն ըրաւ եւ Ս. Պատրիարքի հետ Ժառանգաւորաց վարժարանն եւս եկաւ և անտի գոհ սրտիւ մեկնեցաւ իւր բնակութեան տեղին։ Ամսոյս 8ին քաղաքէս Ճամբայ ելաւ դէպ 'ի Աղեքսանդրիա։

—6ին Բ. Դռնէն տեղւոյս Վսեմ. Կառավարչին ուղղեալ հեռագիր մը եկաւ, որով կը ծանուցանէր Յունաց Պատրիարքին անկումը և միաբանութենէն Բրոգոբիոս փոխանորդ Եպիսկոպոսին տեղապահ նշանակուիլը։ Այն հեռագրի իմաստը պարունակէր երեք

digitised by A.R.A.R.@